

Կա զՊողիկոսս , գիտեա և զայս , քո վասն 'ի սպանդ տայ այսօր •  
 Եր եղկելոյն դու կեցուցիչ և ապաւէն մեծազօր :  
 Ը թեթեա ինչ իցէ , գիտեմ , խընդիրս իմ այս առ 'ի քէն •  
 Եւ մեծագոյն ճրգանցդ 'ի չափ փառք մեծագոյն քեզ յորդէն :  
 Կեցօ զոսոխդ նախանձընդդէմ , լեալ մահաւանաց յաղթական ,  
 Բաբելոնի այս պերճ՝ հանդէս քեզ միայնոյ սեպհական :  
 Իսկ թէ փառաց տենչ և համբաւ չիցեն քեզ շատ 'ի գըրգիւ ,  
 Զէ դոյզն և այն՝ զի սիրուհին զոր դուն այնչափ սիրէիր ,  
 Եւ յոյր ողոք այժմ իսկ թերեւ չէ անընդոստ սիրտ քոյին ,  
 Եւ թե՛ անձնութեան քում շնորհապարտ զիւրն ընկալցի անձկալին :  
 Եւ քեզ և այս լից՝ 'ի վերջէ զի դու ինքն ես Եւեւրոս :  
 Եւ նասցիր ողջամբ , զինչ թէ 'նտրեսցես՝ տես առանձինն անըզբօս :  
 Եւ թէ չիցես դու այնպիսի որպէս ըզքէն յուսամ ես ,  
 Եւ ևս իցէ չգիտել ինձ զայն՝ զի մեծարոյ ինձ իցես : ( Երանկ : )

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կնձրատր կապիկ :

ՊԱՆՂՂԻԱՅԻ բնապատմին մէկը դէպ  
 'ի Բսիա ճամբորդութեան ելլելով՝ հե-  
 տեալ դիպուածը կը պատմէ աս կեն-  
 դանուոյս վրայօք . “ Բմառ ատեն Վօ-  
 չինչին գտնուելով , գեղեցիկ օր մը առ-  
 սուանց կանուխ խրճ(թէս ելայ որ եր-  
 թամ Բեքդի ըսուած գետին եզելքը  
 ժուռ գամ , որ քիչ մը վար մեծ լճի  
 մը մէջ կը թափէր : Հոն տեղուանք  
 գեղեցիկ անտառ մը կար որ մինչև գետը  
 կը տարածուէր . ու առաւօտեան ա-  
 նուշ քամի մը փչելով բլուրներուն ծայ-  
 րերէն , և ծառերուն տերեւները մեղ-  
 միկ շարժելով , սրտիս ախորժելի զովու-  
 թիւն մը կուտար : Եւ այս միայնու-  
 թեան մէջ երբոր հայրենեացս քաղցր  
 յիշատակները միտքս առեր էին՝ մէյ-  
 մ'ալ յանկարծակի պամպուներուն մէ-  
 ջէն ձայն մը լսելով բոլորովին միտքս  
 չփոթեցաւ :

Ինծի կ'երեւար որ բարկացած մէկը  
 սպառնալից ձայնով մը ինծի Գա-հօ  
 Գա-հօ կը կանչէր , որ ինծի աննշան  
 դալով՝ կարծեցի որ տեղացոյ լեզուով

բառ մըն է : Հազիւ թէ աս ձայնս լուռե-  
 ցաւ , մէյմ'ալ անտառին ամէն դիէն  
 սկսան ասոր նման ձայներ լսուիլ ու հետ  
 զհետէ ինծի մօտենալ : () արմացած ա-  
 չուրներս անտառին ճամբաներուն վրայ  
 կը պտրտցընէի թէ ինչ պիտի ըլլայ ,  
 բայց բան մ'ալ չէի տեսներ ու անդա-  
 դար նոյն ահուելի ձայնը ականջս կը խայ-  
 թէր : Եւսու ինծի վախ մը գալ և երբ  
 կը մտածէի շուտով մը այն տեղէն քա-  
 շուիլ , մէյմ'ալ տեսնեմ որ ծառերուն  
 մէջէն անծանօթ կենդանի մը դուրս ե-  
 լաւ ցատքըտելով ու այլանդակ շարժ-  
 մունքներով , ու երեսուն քայլ ինձմէ  
 հեռու կանկ առաւ : Եւ չխոյժ ու կրա-  
 կոտ կ'երևար , երեսը կունքմտած և  
 կունակը կուզ ելած . ամենևին պզտիկ  
 ծերուկի մը նման . մեծութիւնը իրեք  
 ու կէս ոտքէն աւելի չէր . ձեռուրները  
 երկայն ու բարակ , ծնկուրները քիչ մը  
 կորացած , ու աչուրները վառվռուն :  
 Եւ ըստի մորթը կարմրի զարկած դեղին  
 էր . թուշը երկայն ու մոխրագոյն մօ-  
 ըրուքով մը ծածկած էր , ու երկայն պոչ  
 մ'ալ ունէր որ քալելու ատենը գետի-  
 նը կ'աւլէր : Բայց ամենէն սարսափե-  
 լի և ինտալու բանը իրեն քիթն էր . որն  
 որ վեց բթաչափէն աւելի երկայն ա-  
 ղեղնաձև եղջիւրի պէս դուրս ցցուած  
 էր և ածուխի պէս սև էր , և այնպիսի  
 դրբով բերնին վր ծուր էր որ ամենևին

կենդանւոյն արգելք կ'ըլլար խածնելու, որով և վախ մը չէր տար: Արբոր շփոթութիւնս քիչ մը անցաւ՝ իմացայ որ գիմացի կենդանին կապիկներուն մէկ տեսակն էր, զորն որ Վիւվիէն ինչ Թատր հապի կ'անուանէ, բայց տեղացիք իրեն հանած ձայնէն Քահօ կ'անուանեն:

Այս կապիկս ինտէրես կամ ազնոր կապիկներուն կարգը կը սեպուի: Բերնին մէջի երկու կողմերը երկու պարկունի, որոնց մէջ պտուղ կը պահէ, երբոր ուտելու ատեն չունենար կամ ալ կուշտ կ'ըլլայ:



Աս գրած պատկերնիս Շիֆտըն ըստած կապիկն է, որուն ստորագրութիւնը ուրիշ անգամ կը գնենք:

Արքայոր էս այս անձոնսի կենդանին կը զննէի, անիկայ դեռ իրեն այլանդակ շարժմունքները կ'ընէր ինծի նայելով, և կարծես թէ կ'ուզէր ինծի հետ ձևերով խօսակցութիւն ընել, միշտ Վա-հօ, Վա-հօ, կանչելով: Ալ չեմ գիտեր թէ իրեն ձևերը աննշան էին, թէ էս անոր միտքը իմանալու կարողութիւն չունենալու համար էր՝ որ չկրցայ անոր ձևերուն նշանակութիւնը իմանալ:

Այսպէս զարմացած կեցած ատենս, մէյմ'ալ անտառին մէջէն բոլոր ընկերները՝ որոնք որ յիսունի չափ կային՝ դուրս ցատքեցին, ու եկան ասոր չորս կողմը նստան առանց ամենեւին ինծմէ վախնալու: Վայց իմ հետաքրքրութիւնս գալով թէ ինչ պիտոր ընեն, ու որպէս զի չըլլայ թէ յանկարծակի կերպով մ'ալ իրենց շփոթութիւն տամ, հարիւր քայլի չափ հեռու կեցայ: Այլի կապիկը անոնց մէջ ատենախօսի մը պէս կ'երևար, և քաղաքական ատենսի մը պէս կարծես թէ կը ջանար իրեն ճարտասանութեամբը ու զօրաւոր ձևերովը իրեն կարծիքը բոլոր ժողովականաց ընդունելի ընելու. կամ ինչպէս զօրավար մը որ քաջալերական խօսքերով կը նայի իրեն զինուորներուն սիրտը վառել՝ որ վտանգներուն մէջ իրենք զիրենք զննէն չվախնան: Իսկ մէկալ կապիկները ուշադրութեամբ մը իրեն մտիկ կ'ընէին լուռ ու անշարժ կեցած: Տասը վայրկեանի չափ քշեց խորհուրդը, մէյմ'ալ ատենաբանը ոտք ելաւ և սկսաւ դէպ 'ի անտառայից բլուր մը երթալ՝ որն որ հինգ կամ վեց հարիւր քայլ հեռու էր, լծին եզերքին քովը, և բոլոր խումբը թափօր կապեց և լուռ թէ ետէն սկսաւ երթալ:

Աս որ տեսայ՝ իմացայ որ մէջերնին ծածուկ խորհուրդ մը կար, մանաւանդ երբոր տեսայ որ ամենայն զգուշութեամբ մնացածներուն մէջէն կ'անցնէին, ինչպէս թէ վախնային որ չըլլայ թէ բռնուին. ուստի ուշադրութեամբ կը նայէի թէ վերջը ինչ պիտի ըլլայ:

Արքայոր բլրին ծայրը հասան, ալ գրեթէ իմացայ անոնց միտքը. վասն զի

տեսայ որ ձկնորսի մը տանը ետևը բաւականապէս մեծկակ պարտէզ մը կար, որ շատ տեսակ պտղալից ծառերով զարդարուած էր. բայց պարտէզին չորս դին բարձր պատով արգելուած էր, անանկ որ ինծի անկարելի կ'երևար որ աւարառունները կարենան ներս մտնել: Արքայոր պատին քովերը մօտեցան՝ իրար մէջ բաժնուեցան, և ոմանք տեղը քննելու համար բարձր ծառերու վրայ ելան, ու ոմանք ալ լռիկ մնչիկ պարտէզներուն կը մօտենային: Վախաւորնին՝ զորն որ մինչև նոյն ատենը աչքէ չէի կորսնցուցած, և իրեն հասակին բարձրութեամբը անոնցմէ կը զանազանէր, ամենէն առաջ ինքզինքը վտանգի մէջ դրաւ, ու ամենայն դիւրութեամբ ու երագութեամբ պատին վրայ ճանկը տեղով ելաւ. բայց անգիտի կողմը մէկէն չանցաւ. առաջ քիչ մը ատեն պատին վրայ կեցաւ, ու քանի մը անգամ գլուխը պատէն վեր հանեց նայեցաւ դիտեց, որպէս զի չըլլայ թէ յանկարծակի անգիտի կողմը թշնամի մը գանուի: Արքայոր ալ ինքզինքը բոլորովին ապահովացուց, ցատքեց պարտէզին մէջ՝ ցած ձայնով մը Քա-հօ Քա-հօ կանչելով: Այլմ'ալ բոլոր խումբը նետուեցաւ պարտէզին մէջ առանց ամենեւին զգուշութիւն մը ընելու: Այլ վայրկեանի մը մէջ բոլոր պարտէզը բռնեցին ու սկսան աւարի առնուլ: Պանանները, արմաւները ու բոլոր մէկալ պտուղները կարկտի պէս գետին կը թափէին, ու վարն եղող կապիկները շուտ շուտ կը ժողվէին ու պատէն դուրս կը նետէին, որպէս զի փախչելու ատենը անկէ ժողվեն տանին: Վայց կը տեսնէի որ ամենէն առաջ բերններնուն պարկերը կը լեցընէին, անկէ վերջը պատէն դուրս կը նետէին, ու իրենց երեսները սոսկալի ուռած կ'երևնային, և գլուխնին ալ առջինին կրկին մեծութեամբ կ'երևնար:

Արքայոր աւար մը քիչ մը խոշոր ըլլար՝ անանկ որ պատէն դուրս նետելը գժար ըլլար, ինչպէս ձմեռուկ մը, սն ատեն շատ մը կապիկներ կարգաւ իրարմէ

բարձր կը կենային սարփինայի ձողե-  
րուն վրայ պլուելով՝ ու անանկ ձեռքէ  
ձեռք կ'անցընէին, ինչպէս որմնագիր-  
ները կ'ընեն երբ երգիքի կզմինտրերը  
կը նետեն : Միով բանիւ աս աւարա-  
ուութե պէս զուարճալի տեսարան չէր  
կրնար ըլլալ, վերէն պտուղներուն թա-  
փելը, և կապիկներուն դուրս նետելը :  
Իայց մէյմ՝ ալ յանկարծ հրացանի  
ձայն մը լսուեցաւ, ու մէկ վայրկենի  
մէջ ամէն ալ պարտէզէն դուրս նե-  
տուեցան առանց ձեռուրնին եղած ա-  
ւարը թողլու, և ամէնն ալ մօտ անտա-  
ռին մէջ ցրուեցան, ու ծառերուն վրայ  
եղան և ոստէ ոստ ցատքելով սկսան  
փախչիլ :

Իյեղձ՝ ձկնորս պարտիզպանը՝ որ ինքն  
էր հրացան պարպողը, շատ ուշ հասաւ,  
բանը բանէն անցեր էր, և գողցուած ա-  
ւարէն քանի մը կտոր բան միայն գտաւ :  
Սօտեցայ անոր, որ գանգըտելով սկսաւ  
ըսել, որ այդ անիծած կենդանիները  
շատ անգամ նոյն կերպով զինքը ու իր  
զրացիները խաղցուցեր էին : « Եզեր-  
քին մօտ եղած խոշոր ծառերուն վրայ  
կ'ելէն, ըսաւ, ու թէ որ ամենայն  
կերպով զգուշութիւն չըլլուի՝ ինչ որ  
վրանին գտնեն՝ կ'առնեն կը տանին » :  
Յցուց ինծի հրացանով սպաննած կա-  
պիկը, և տեսածիս պէս ճանչցայ որ  
անոնց գլխաւորին զիակն էր : « Ե՛հա  
այս էր, ըսաւ, խումբին գլխաւորը ու-  
րուն վրայ նշանա առի, վասն զի գի-  
տեմ որ ասոր սասկեղէն վերջը բոլոր  
խումբը կը ցրուի, ու մէյմ՝ ալ աս տե-  
սակ աւարաուութեանց ձեռք չեն զար-  
ներ, ինչուան որ ուրիշ գլխաւոր մը  
ընտրեն, ասանկով քանի մը օրուան  
հանգստութիւն ապահովուցուցի » :  
Իյեղձ՝ ձկնորսին ձեռքը քիչ մը ստակ դրի, ու  
կապիկը առի որպէս զի մորթը Լըրո-  
պայ բերեմ » :

ԶՈՒԱՐ ԾԱԼԻՔ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿՆ . Ծաղկագարմաններու մեծ  
զուարճութիւն մըն է՝ մի և նոյն արմատէն շատ  
տեսակ գոյներով ծաղկներ հասցընել, որն որ այն.  
չափ աւելի մարդուս զարմանք կը բերէ, որչափ  
որ ինչ կերպով ըլլալը շատին անծանօթ է. հիմա  
մենք աս բանիս գիւրին կերպ մը սորվեցընենք :  
Աւ մէկ թղաչափ թանթրուենիի 1 ճիւղ մը ու  
մէջ տեղէն ճղքելով միջուկը հանէ, և անոր տեղը  
ընցուր մէջը ուզած ծաղկիդ հունտերը այլ և այլ  
գոյն ունեցող արմատներէն ժողկելով ու հողի  
հետ խառնելով. ետք ան երկու կտորները վը-  
րայէ վրայ բեր ու թելով կամ դերձանով մը կա-  
պէ, ու հողով լեցուն թաղարի մէջ նոյն ճիւղը  
անկէ, և ուրիշ բուսոց պէս երբեմն երբեմն ջուր  
տուր : Քիչ ատենէն տնկած հունտերդ կը ծլին  
ու նոյն ճիւղին մէջէն վեր ելլելու ատեն մէկմէկու  
հետ կը միանան՝ անանկ որ աչքի մէկ ոստ մը միայն  
կ'երևայ . բայց երբ նոյն փողոսկին ծայրը կը  
հասնին, ճիւղերը նորէն կը բաժնուին ու ամէն  
մէկը իրեն հունտին յարմար այլ և այլ գունով  
ծաղկներ կու տան, որ տեսնողը կարծէ թէ մի և  
նոյն արմատէն է : Աս կերպով կրնաս նաև այլ և  
այլ տեսակ ծաղկներ ալ հասցընել մի և նոյն ար-  
մատէն, բայց պէտք է գիտնալ որ եթէ ցեղով ալ  
աարբեր ըլլան, ու այլ և այլ ժամանակի բոյսեր  
ըլլան՝ դժուար կը հասնին :

ԹՈՒՍԱԲԱՆԱԿՆ . Թուոց մէջ յիրաւի զարմա-  
նալի բաներ կան որոնց վրայ մտածել ու խելք  
յուզնեցընելը չէ թէ միայն զուարճութիւն մըն է,  
հապա նաև միտք բանալու ալ շատ կ'օգնէ . ասոնց  
մէ մէկն է նաև 37 թիւը, որն որ եթէ բազմա-  
պատկէս թուաբանական յառաջատուութեան աս  
թուանշաններովս 3, 6, 9, 12, 15, 18, 21, 24 և  
27 . արտագրեալը կը ձևանայ իրեք նման թուա-  
նշաններէ . և նոյն թուանշաններուն գումարն ալ  
կ'ըլլայ հաւասար բազմապատկող թուոյն . ինչպէս՝

37, 37, 37, 37, 37, 37, 37, 37, 37 . 37  
3, 6, 9, 12, 15, 18, 21, 24, 27  
411, 222, 333, 444, 555, 666, 777, 888, 999

ՄԱՐԱԿԱՅԳ . Վարպետորդի գողին մէկը ան-  
գամ մը Գաղղիոյ թագաւորին պալատը կը մտնէ  
ու հոն սրահի մը մէջ գրուած ժամացոյցը կ'ուզէ  
վերցընել . երբ սանդուխը պատին կռթընցուցած  
կ'աշխատէր, Լուգովիկոս ԺԳ ներս կը մտնէ : Գու-  
ղը առանց շփոթելու « Վախեմ սանդուխը կը սա-  
հի » կ'ըսէ : Թագաւորը կարծելով թէ տան մար-  
դիկներէն մէկն է, ու հարկաւոր բանի մը համար  
ժամացոյցը վար կ'առնէ, կու գայ սանդուխը կը  
բռնէ, որ չըլլայ թէ փորձանք մը պատահի : Գողն  
ալ հանդարտիկ կերպով կ'առնէ ժամացոյցը գուրս  
կ'ելլէ : — Քիչ ատենէն թագաւորին իմաց կու  
տան որ գրի սրահին ժամացոյցը վերացեր է, ու  
նով առեր է և ինչպէս առեր է չգիտցուիր : —  
« Բան չկայ, կ'ըսէ, թագաւորը . ես ալ գողա-  
կից էի, գողին սանդուխը բռնելով » :

1 ՏՃ . Միւրվեր աշած :